

ԴՎՔ	Դրամավարկային քաղաքականություն
ԵԿԲ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԴՊՀ (ՖՊՀ)	Դաշնային (Ֆեդերալ) պահուստային համակարգ
ՍԳԻ, ԱԱԳ	Սպառողական գների ինդեքս, Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
MoM	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ ամսվա նույն ցուցանիշը
YoY	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ տարվա նույն ցուցանիշը
QoQ	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
WoW	Որպես ցուցանիշի հիմք վերցվում է նախորդ շաբաթը
K	Հազար, ամերիկյան գրեյաձև
B	Միլիարդ, ամերիկյան գրեյաձև
PMI	Purchasing Managers' Index. ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները
Core (բազային)	Ցուցիչ, որը ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տարանջատում ունեցող բաղադրիչներ

Օգտագործված աղբյուրներ

- ՀՀ տնտեսական ցուցանիշների տվյալների համար որպես աղբյուր օգտագործվել են ՀՀ Կենտրոնական Բանկի, Ազգային Վիճակագրական ծառայության, Ֆինանսների նախարարության, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի, Համաշխարհային Բանկի և Արժույթի Միջազգային Հիմնադրամի վիճակագրական բազաները, հրապարակումները և հաշվետվությունները,
- Արտաքին հատվածի տվյալների աղբյուրների համար տրված են բոլոր անհրաժեշտ հղումները

Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:


Կոնտակտային տվյալներ՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19
Վերլուծաբաններ՝ Թ.Սարգսյան, Ա.Մաթասյան
(010) 591 525, (010) 591 526

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ


- 2018թ մարտ ամսին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ գրանցել է 10.9% (YoY) աճ: Աճ է գրանցվել ՀՀ տնտեսության բոլոր ոլորտներում:
- Ներքին առևտրաշրջանառությունն աճել է 6.3%-ով՝ կազմելով 219.2 մլրդ դրամ, արդյունաբերության ոլորտում աճը կազմել է 8.2%՝ թողարկված արտադրանքի ծավալը կազմելով 145.8 մլրդ դրամ: Ծառայությունների ծավալն աճել է 16.5%-ով (YoY)՝ կազմելով 129.8 մլրդ դրամ:
- 5.3% (YoY) աճ է արձանագրվել գյուղատնտեսության ոլորտում՝ թողարկված արտադրանքի ծավալը կազմելով 35 մլրդ դրամ:



- Շինարարության ոլորտում պահպանվում են տարվա սկզբից գրանցվող աճի բարձր տեմպերը: Մարտ ամսին գրանցված աճը կազմել է 23.2% (YoY), իսկ հունվար-մարտին ՀՀ-ում իրականացվել է 21.6 մլրդ դրամ ծավալով շինարարություն՝ աճը կազմելով 23% (YoY):


Գնային միջավայր

- 2018թ մարտ և ապրիլ ամիսներին գնաճը երկրում նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ կազմել է համապատասխանաբար 3.7% և 2.4% (YoY):
- Մարտ ամսին սննդամթերքի գները (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ) աճել են 4.6%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 5.0%-ով, իսկ ծառայությունների սակագները՝ 1.8%-ով:
- Առաջին եռամսյակի արդյունքներով երկրում գրանցվել է 4.2% գնաճ (YoY):
- Ապրիլ ամսին գնաճի տեմպերը երկրում կրճատվել են՝ տարեկան կտրվածքով կազմելով 2.4% (YoY):
- Մարտ ամսվա նկատմամբ ապրիլին գրանցվել է 0.3% (MoM) գնանկում, այդ թվում՝ սննդամթերքի (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ) գները նվազել են 1%-ով, ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.4%-ով, իսկ ծառայությունների սակագները ավելացել 0.2%-ով (MoM):
- Ապրիլ ամսվա համար ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից սահմանափակ քանակությամբ ապրանքներից բաղկացած զամբյուղի գծով հաշվարկվող գնաճը կազմել է 0.8% (YoY):




ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

- 2018թ մարտին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 102.2 մլրդ դրամ, ծախսերը՝ 124.4 մլրդ դրամ: Նախորդ ամսվա նկատմամբ աճ են գրանցել պետական բյուջեի թե եկամուտները, թե ծախսերը:
- ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը կազմել է 22.3 մլրդ դրամ:
- **2018թ ցուցանիշները ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացվում են համաձայն 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ և 456-րդ հոդվածների, ըստ որի՝ «Հարկեր և տուրքեր» ցուցանիշում առանձնացվել է «Հարկերի անցումային գերավճար» ցուցանիշը: Հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտների մասով ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշների հետ՝ աճի տեմպեր չեն հաշվարկվել:**



- ՀՀ պետական պարտքն 2018թ մարտին կազմել է 6.9 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը 2017թ նույն ամսվա արժեքը գերազանցում է 14.9%-ով (YoY): Փետրվար ամսվա ցուցանիշի նկատմամբ ՀՀ պետական պարտքն ավելացել է 0.3%-ով:
- Միայն արտաքին պարտքը մարտի վերջի դրությամբ կազմել է 5.6 մլրդ ԱՄՆ դոլար՝ ավելանալով տարեկան 15.5%-ով (YoY): Ներքին պարտքն, իր հերթին, նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ավելացել է 12.3%-ով (YoY)՝ կազմելով 1.31 մլրդ ԱՄՆ դոլար:
- Հաշվի առնելով ՀՀ մշտական բնակչության թվաքանակը՝ բնակչության մեկ շնչի հաշվով պարտքը կազմում է 2,308.9 ԱՄՆ դոլար (2017թ երրորդ քառորդի տվյալներով ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմում է 2,982,900 մարդ):




ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Արտաքին առևտուր

- 2018թ մարտին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 617.8 մլն ԱՄՆ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 28%-ով (YoY):


Առևտրաշրջանառության կազմում արտահանման ծավալների աճը կազմել է 23.7%՝ հասնելով 210.3 մլն դոլարի, իսկ ներմուծման ծավալներն աճել են 30.3%-ով (YoY)՝ մինչև 407.5 մլն ԱՄՆ դոլար:



- 2018թ փետրվարի նկատմամբ մարտին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշն աճել է 4%-ով (MoM): Արտահանման ծավալները փոփոխություն չեն կրել, մինչդեռ ներմուծման ծավալներն ավելացել են 6.1%-ով (MoM):
- ՀՀ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը մարտին 2017թ մարտի համեմատ խորացել է 38.2%-ով՝ մինչև -197.2 մլն ԱՄՆ դոլար:

Դրամական հոսքեր

- 2018թ մարտին դրամական միջոցների զուտ ներհոսքը ՀՀ նախորդ տարվա մարտի համեմատ կրճատվել է 29.8%-ով՝ կազմելով 37.2 մլն ԱՄՆ դոլար:
- Նախորդ ամսվա նկատմամբ դրամական միջոցների զուտ ներհոսքը ՀՀ աճել է շուրջ 36%-ով:
- ՌԴ-ից ստացվող դրամական փոխանցումները մարտին




փետրվարի նկատմամբ ավելացել են 1.23%-ով, իսկ դեպի ԱՄՆ զուտ արտահոսքը փոխարինվել է ներհոսքով:

ՀՀ դրամական միջոցների զուտ ներհոսք, կառուցվածք ըստ երկրների, մլն ԱՄՆ դոլար					
	Մարտ 2017թ	Փետրվար 2018թ	Մարտ 2018թ	%, MoM	%, YoY
Զուտ ներհոսք	53.0	27.3	37.2	36.0	-29.8
այդ թվում՝					
ՌԴ	36.3	38.2	38.7	1.23	6.6
ԱՄՆ	5.5	(6.9)	3.7	152.7	-33.3


ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

- 2018թ մարտին ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված դրամային վարկերի ծավալները նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ ավելացել են 13.8%-ով (YoY)՝ կազմելով 1 տրլն դրամ, արտարժույթայինը՝ 11.6%-ով (YoY)՝ կազմելով 1.7 տրլն դրամ:
- Բանկերի կողմից ներգրավված դրամային ավանդների ծավալները նույն ամսում ավելացել են 19%-ով (YoY)՝ կազմելով 1.1 տրլն դրամ, իսկ արտարժույթով ավանդների ծավալները՝ 3.8%-ով (YoY)՝ կազմելով 1.6 տրլն դրամ:
- Ինչ վերաբերում է տոկոսադրույքներին, ապա դրամով վարկերի միջին տոկոսադրույքը 2017թ մարտի համեմատ 2018թ մարտին նվազել է 3.4 կետով՝ մինչև 13.0% մակարդակը, արտարժույթային վարկերինը՝ 0.7 կետով՝ մինչև 8.8%, դրամային ավանդների տոկոսադրույքների միջին



մակարդակը նախորդ տարվա մարտի 10.6%-ից 2018թ մարտին նվազել է մինչև 9.2%, իսկ արտարժույթայիններինը՝ 5.2%-ից մինչև 3.9%:

- Տոկոսադրույքների նվազման հիմքում ՀՀ ԿԲ կողմից պահպանվող խթանող դրամավարկային քաղաքականությունն է, որը պահպանվել է ողջ 2017թ ընթացքում և այժմ, և որի ազդեցության լազային էֆեկտը զգացվում է 2018թ առաջին կեսին:




- ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում 61.8%-ը բաժին է ընկնում արտարժույթային վարկերին:
- Վարկավորման կազմում առավելագույն տեսակարար կշիռն ունեն սպառողական վարկերը՝ 548.6 մլրդ դրամ (22.3%), որոնց 81%-ը դրամային վարկերն են: Երկրորդ տեղում արդյունաբերության ոլորտն է՝ 476.7 մլրդ դրամ (19.8%), որի 83%-ը կազմում են արտարժույթով վարկերը, երրորդ տեղում առևտրի ոլորտն է՝ 419.9 մլրդ դրամ կամ վարկերի 17%-ը: Առևտրի ոլորտին տրամադրված վարկերի 84%-ն արտարժույթային վարկեր են:

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերն ըստ ոլորտների, 2018թ մարտ, մլն ՀՀ դրամ						
	ՀՀ դրամով	% ընդամենից	Արտարժույթով	% ընդամենից	Ընդամենը	%
Արդյունաբերություն	82,103	16.9	404,657	83.1	486,760	19.8
Գյուղատնտեսություն	59,567	43.0	78,962	57.0	138,529	5.6
Շինարարություն	28,573	19.1	121,357	80.9	149,930	6.1
Տրանսպորտ և կապ	14,107	19.7	57,332	80.3	71,439	2.9
Առևտուր	68,001	16.2	351,945	83.8	419,945	17.0
Սպասարկման ոլորտ	45,795	20.1	181,954	79.9	227,750	9.2
Սպառողական վարկեր	445,320	81.2	103,322	18.8	548,642	22.3
Հիփոթեքային վարկեր	113,800	54.0	96,749	46.0	210,549	8.5
Այլ	94,132	44.6	116,914	55.4	211,045	8.6
Ընդամենը	951,397	38.6	1,513,192	61.4	2,464,589	100.0


ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱ

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ


- Moody's միջազգային վարկանիշային գործակալությունը հաստատել է ԱՄՆ սուվերեն վարկային վարկանիշը՝ AAA առավելագույն մակարդակում՝ կայուն կանխատեսմամբ: Ըստ գործակալության՝ AAA գնահատականը հաստատում է ԱՄՆ տնտեսության ուժը, դրա ենթակառուցվածքների հուսալիությունը և շուկերի նկատմամբ թույլ զգայունությունը: Ըստ Moody's-ի՝ նման բարձր գնահատականը հիմնված է ամերիկյան տնտեսության բարձր մրցունակության, բազմակողմանիության և դինամիկության վրա:
- 2018թ. առաջին կիսամյակում ԱՄՆ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներն առավելապես խոսում էին տնտեսության տարբեր ոլորտներում դրական տեղաշարժերի մասին: Գործազրկության մակարդակը երկրում հասել է 2000 թվականից հետո գրանցված նվազագույն արժեքների (ապրիլին՝ 3.9%): Մանրածախ առևտրի ծավալները փետրվարին ամսական կտրվածքով 0.1% անկում գրանցելուց հետո արդեն մարտին աճել են 0.6%-ով:
- Դրական տեղաշարժեր են գրանցվում ամերիկյան արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում ևս: Տարվա առաջին քառորդում ՀՆԱ տարեկան (YoY) աճը կազմել է 2.3% այն դեպքում, երբ կանխատեսումների համաձայն սպասվում էր ընդամենը 2%-ով աճ: Սկսել է կրճատվել նաև ԱՄՆ առևտրային հաշվեկշռի բացասական սալը (նախորդ -57.7 մլրդ ԱՄՆ դոլարից հասել է -49 մլրդ ԱՄՆ դոլարի):
- Նման դրական տնտեսական զարգացումների պայմաններում ավելի են աճում ԱՄՆ ՖՊՀ կողմից դրամավարկային քաղաքականության խստացման սպասումները, հատկապես, որ արդեն իսկ բազմիցս նշվել է 2018թ. ընթացքում ԴՎԲ բազային տոկոսադրույքը 3 անգամ բարձրացնելու մտադրության մասին:
- ԱՄՆ դոլարի ինդեքսը, որն արտացոլում է վերջինիս դիրքերը 6 հիմնական արժույթներից կազմված զամբյուղի նկատմամբ, 2018թ. ապրիլ ամսվա ընթացքում գրանցել է ավելի քան 2% աճ՝ չնայած, որ ԱՄՆ-Հինաստան առևտրային պատերազմի ռիսկերը դեռևս շարունակում են մնալ ֆինանսական շուկայի մասնակիցների ուշադրության կենտրոնում և զսպում են դոլարի դիրքերի ավելի արագ տեմպերով ուժեղացումը:




- Եվրոպական արժույթն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2018թ. ապրիլ ամսվա ընացքում գրանցեց մոտ 1.98% անկում՝ պայմանավորված ինչպես ընդհանուր ԵՄ և վերջինիս առանձին երկրների մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացմամբ, այնպես էլ ԱՄՆ դոլարի դիրքերի ամրապնդմամբ: EUR/USD զույգի վրա բացասաբար ազդող գործոններից են գործարար միջավայրի կլիմայի վատթարացումը (ինդեքսը նվազել է մինչև վերջին 8 տարիների նվազագույն արժեքներ, ինչը նվազեցնում է ԵԿԲ առաջիկա նիստում խթանող միջոցառումների կրճատման սպասումները), ԵՄ ինֆլացիայի տեմպերի դանդաղումը, մանրածախ առևտրի ծավալների աճի տեմպերի դանդաղումը, ԱՄՆ մի շարք դրական մակրոցուցանիշների հրապարակման ֆոնին դոլարի դիրքերի ուժեղացումը, ԵԿԲ կողմից խթանող ԴՎՔ միջոցառումների պահպանումը, ԱՄՆ ՖՊՀ հունիսյան նիստում ԴՎՔ տոկոսադրույքի բարձրացման սպասումների աճը, ինչն ուժեղացնում է ԱՄՆ դոլարի դիրքերը՝ հանգեցնելով EUR/USD զույգի նվազման: Նախնական տվյալների համաձայն ՀՆԱ աճն 2018թ առաջին քառորդում կազմել է 2.5% (YoY) նախկին 2.7%-ի փոխարեն:



- Նշենք, որ 2018թ. ապրիլի 26-ին տեղի ունեցած հերթական նիստում ԵԿԲ-ն որոշեց անփոփոխ թողնել դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքները՝ ավանդադրման տոկոսադրույքը պահպանելով նախկին՝ - 0.40%, վարկավորման օվերնայթ տոկոսադրույքը՝ 0.25%, իսկ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 0.00% մակարդակում: Որոշվեց նաև ակտիվների գնումները շարունակել մինչև ընթացիկ տարվա սեպտեմբեր ամիսը: Նման որոշումն ԱՄՆ դոլարի դիրքերի ամրապնդման հետ մեկտեղ հանգեցրեց EUR/USD զույգի անկման:



- GBP/USD զույգն 2018 թվականի ապրիլ ամսվա ընթացքում գրանցել է 1.75% անկում: Վերջինիս անկումը ևս առավելապես պայմանավորված էր ԱՄՆ դոլարի նկատմամբ պահանջարկի աճով: Հարկ է նշել նաև, որ բրիտանական արժույթի անկմանը նպաստեցին նաև Մեծ Բրիտանիայի՝ ապրիլ ամսվա ընթացքում հրապարակված մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք հիմնականում զիջում էին նախորդ տվյալներին: Մասնավորապես, նվազել են ինֆլյացիայի տեմպերը, դանդաղել են մանրածախ առևտրի աճի տեմպերը (+1.1% տարեկան աճ նախորդ 1.5% աճից հետո, իսկ ամսական կտրվածքով՝ -1.2% անկում): Նախնական տվյալների համաձայն ՀՆԱ աճն 2018թ առաջին քառորդում կազմել է 1.2% (YoY) նախկին 1.4%-ի փոխարեն:




- Ռուսական արժույթն ամբողջ ապրիլ ամսվա ընթացքում գտնվում էր գեոքաղաքական ռիսկերի ճնշման տակ: USD/RUB փոխարժեքն ամբողջ ամսվա ընթացքում գրանցեց ավելի քան 10% աճ, և նույնիսկ նավթի գների զգալի վերականգնումը չլարողացան զսպել ռուսական ռուբլու դիրքերի նման անկումը:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱ

- 2018 թվականի առաջին քառորդում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցվել է ոսկու համաշխարհային պահանջարկի կրճատում՝ 7%-ով (աղբյուրը՝ Ոսկու համաշխարհային խորհուրդ WGC): Տոկոսադրույքների բարձրացումների սպասումները, փաստորեն, ներդրողներին դրդեցին փնտրել առավել եկամտաբեր ակտիվներ: Ոսկու նկատմամբ համաշխարհային պահանջարկն արդեն հասել է 973.5 տոննայի, ինչը 2008 թվականից հետո գրանցված նվազագույն ցուցանիշն է: Նշենք, որ պահանջարկի անկումն առավելապես ապահովվել է ներդրումային սեգմենտի հաշվին, որտեղ ոսկյա ձուլակտորների և մետաղադրամների սպառումը նվազել է 15%-ով: Ոսկյա իրերի նկատմամբ համաշխարհային պահանջարկը նվազել է 1%-ով: Աշխարհի երկրորդ խոշորագույն սպառող երկրում՝ Հնդկաստանում, դիտարկվող ժամանակահատվածում ոսկյա իրերի նկատմամբ

պահանջարկը 2017թ. համեմատ նվազել է 12%-ով, մինչդեռ Չինաստանում նույն ժամանակահատվածում պահանջարկն աճել է 7%-ով (մինչև 188 տոննա):



- Չնայած, որ ոսկու նկատմամբ համաշխարհային պահանջարկը տարվա սկզբից գրանցել է որաշակի անկում՝ նույն ժամանակահատվածում գրանցվել է նաև կենտրոնական բանկերի կողմից պահանջարկի 42% աճ: Մասնավորապես, որպես խոշորագույն գնորդ հանդես են եկել Ռուսաստանը, Թուրքիան և Ղազախստանը:
- Տարվա առաջին քառորդում ոսկու ընդհանուր առաջարկն աճել է մոտ 3%-ով՝ մինչև 1,063.5 տոննա:
- Ոսկու գներն ապրիլ ամսվա ընթացքում գրանցեցին մոտ 0.23% անկում՝ մոտենալով մեկ ունցիայի դիմաց 1,301 ԱՄՆ դոլար արժեքին: 2017թ վերջին գրանցված զգալի աճից հետո արդեն 2018թ. հունվար-ապրիլ ամիսներին ոսկու գները տատանվում էին 1,301-1,366 ԱՄՆ դոլար արժեքների սահմաններում:

Ոսկու նկատմամբ պահանջարկ/ 2018թ. առաջին եռամսյակ¹			
տոննա	2018թ. 1-ին եռ.	2017թ. 1-ին եռ.	YoY
Ոսկյա իրերի պահանջարկ	487.7	491.6	-1%
Այդ թվում՝			
Չինաստան	187.8	175.6	+7%
Հնդկաստան	87.8	99.2	-12%
Ներդրումային պահանջարկ	287.3	394.2	-27%
Այդ թվում՝			
Ոսկյա ծուլակտորներ և մետաղադրամներ	254.9	298.2	-15%
Այդ թվում՝			
Չինաստան	78	105.9	-26%
Հնդկաստան	27.9	32	-13%
Ոսկով ապահովված ETF-ներ	32.4	96	-66%
Կենտրոնական բանկերի կողմից գնումներ	116.5	82.2	42%

- Brent տեսակի նավթի գինն 2018թ ապրիլ ամսվա ընթացքում գրանցեց մոտ 6.97% աճ՝ հասնելով մեկ բարելի դիմաց 75 ԱՄՆ դոլարից բարձր արժեքների: Աճողական դինամիկան շարունակվեց նաև մայիս ամսվա առաջին շաբաթվա ընթացքում: Նման աճն առավելապես

¹ Աղբյուրը՝ <https://www.gold.org/> , Ոսկու համաշխարհային խորհուրդ.

պայմանավորվել է գեոքաղաքական ռիսկերի աճով: Մի կողմից Վենեսուելայում նավթի արդյունահանման ծավալների կրճատումը, մյուս կողմից Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերականգնումը ապրիլ-մայիս ամիսներին հանգեցրին նավթի գների կտրուկ աճի: Միևնույն ժամանակ կնքված համաձայնագրի շրջանակներում շարունակում են կրճատվել ՕՊԵԿ-ի և այլ նավթ արտահանող երկրների կողմից նավթի արդյունահանման ծավալները:

- Չնայած, որ շարունակում են աճել ԱՄՆ նավթի արդյունահանման ծավալները (EIA տվյալներով՝ 10.7 մլն բարել/օր)՝ այնուամենայնիվ, այժմ առավել ազդեցիկ գործոն է Իրանի նկատմամբ ԱՄՆ կողմից պատժամիջոցների վերականգնումը, ինչն առաջիկայում կհանգեցնի առաջարկի կրճատմանն ու արդեն իսկ նման սպասումների ֆոնին դրականորեն է անդրադառնում նավթի գնի վրա:

